

ՀԱՐԱՐ ՎԵՐԳԵՆ.

ԱՒԻՐՆ ԻՆՉԱՆԻՑ—
— ՓՈՒՇԻՆ ՔԵԶԱՆԻՑ

(Զափամուտ առակ).

Գրանձակ

Տպարան Է. Ա. Նանասեանցի.

1912.

891.99

Կ-29

8 AUG 1912

891.99

U-48

Այս քաղաքացիական ծառայության
ժողովուրդական հարցադրման
հարցը լուծարված է.


W 11053

№ 128
— ջանքով.


ԱԼԻԻՐՆ ԻՆՉԱՆԻՑ—

—ՓՈԽՇԻՆ ՔԵԶԱՆԻՑ

1001
3961



(Չափաժողովուրդական).



Գտնվում է

Տղարան Ա. Ա. Նամաստանցի.

1912.

08 AUG 2013

57568

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մասնաճյուղ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆՈՒՆԻՐ

ԸՆԹԵՆՑԱՄԵՐ

ԵՐ

ՀԱՄԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱԼԻԻՐՆ ԻՆՉԱՆԻՅ

ՓՈԽՇԻՆ ՔԵԶԱՆԻՅ

Մարդու մէկը, մահւան ժամին,
Իր մօտ կանչեց քաշալ տղին,
Իր մինուճար յաջորդ որդուն,
Պատէր տաւ վերջին պահուն.
Թէ՛ թողնումեմ իմ ունեցւածք՝
Պարտէզ, այգի ու իմ կալւածք
Եւ խնդրումեմ, որ իմ տունը
Մինչև կեանքիդ վերջին շունչը,
Դու վառ պահես առատ ձեռքով,
Ողորմած ու զթած սրտով,
Թէ զբացուն, թէ անցւորին
Առանց հրաւէր բաց չ'թողես,
Կարօտեալին ու խեղճերին՝
Կտոր հացդ չը խնայես.
Միայն՝ կեանքումդ դու քօսակից
Հեռու կացիր և քաշալից...»

Պերջին խօսքը հազիւ ասաց
Ու խեղճ մարդը հողին փչեց,
Մեր քաշալն էլ ըստ արժանւոյն,
Մի լաւ պատուով հօրը թաղեց:

I

Անցան ամիս, քանի օրեր,
Քաշալն հացի կարէի ունէր,
Եւ մի էշի բեռը աղուն՝
Չինեց, սարքեց, զբաւ իր տուն...
Մէկ առաւօտ էլ վերկացաւ,
Դէպի ջաղաց ճամպաւ ընկաւ:

Չատ էր զընացել,
Թէ քիչ մընացել՝
Չեմ մտաբերում,
Այսքանն եմ հիշում:

Թէ ինչպէս բեռով ջաղացը հասաւ
Ու զեռ ջաղացի դուռը չ'հասած,
Յանկարծ մի քօսակ առաջն ելաւ,
Թէ «Ջաղացականն եմ» ասաւ ու ժպտաց:

Քաշալն երբ որ չ'տեսաւ ալրոտ,
Այս ջաղացականին ու քօսակ, ճինդուտ,
Իշուկին բեռով խակոյն յետ դարձրեց,
Ճամպաւ ընկնելով էլ յետ չընացեց:

II

Քօսակը տեսաւ, որ անձանօթը,
Իրանից խշտնած վերինը զիմեց,
Մի այլ նեղ շաւղով ջաղացը վազեց,
Հէնց այն ջաղացն, ուր որ նա զիմեց-
Դռանը նստեց, փափաղը քթեց,
Իբր թէ անմեղ, բանի խարար չի,
Նստած դռանը, մարդու կ'սպասի:
Քաշալն էլ էշով,
Կողքին հրելով,
Երբ որ մօտեցաւ,
Ջառիվայրն անցաւ,
Ջաղացին հասաւ
Ու ջաղացականին
«Բարի օր» ասաւ...
Մէկ էլ քօսակին,
Նա որ չ'տեսաւ,
Խիստ բարկութիւնից
Աչքերը մթնեց,
Իր թընդութիւնից
Դուխը — պրտըտեց
Եւ քթի տակին
Նրա հասցէին
Ըսկի բան մնաց...
Էլ ինչեր չ'ստաց...

«Նահլիժ ստտանին,
 էս չար սնաթին.
 Ո՛ր կողմը գնամ, որ էս քօսակից՝
 Գլուխս աղատեմ.
 Էս ճինդոտ, ջրոտ, շուն ջաղացականից
 Ես հախսիս թափեմ:
 Ես էս սնից անեմ, որ հօրս խօսքից
 Գուրս չ'գամ — պահեմ...»

Եւ խորատուգլած իր մտքի ծովում,
 Քօսին*) պատժելու հնարք էր փնտրում:
 Եւ իշուկի հետ երկրորդ ջաղացից
 Վերադառնալով՝ երրորդին գիմեց.

Բայց մինչեւ էշով
 Նա տեղ կըհասնէր,
 Քօսէն կեծանով
 Հասած — սպասումէր,
 Որ էն խոր ձորով,
 Մեծ քերծի գլխով
 Ջաղացն էր տանում,
 Բանը հեշտացնում:

Գուր տեսէք բանից ինչ է երևում.
 Որ այդ քօսակը, այդ ձորի միջում,
 Ծանօթ. *) Քօս Էս այստեղ գործ հմածում
 Քօսակ բառի փոխարեն տ. չափ. հմբ. Ա. Վ...

Երեք ջաղացի՝ մէկէն էր հսկում.
 Եւ ով որ խամէր տեսքիցն էր զգուս,
 Քաշալի նման ջաղացն էր փոխում.
 Բայց թէ քօսակը նրանցից չէր պոկում.
 Միշտ այդ կեծանով առաջ էր վազում
 Ու նրանցից շուտ ինքն էր տեղ հասնում:



Նրանք էլ վերջապէս, յոյսները կտրած,
 Իրանց բախտի հետ մի կերպ հաշտելով,
 Ջաղացից մէկում աղունը չորցրած
 Վայր էին գնում՝

Աղում — աղատում:

III

ԹՕՂ. ԹՕՂ. էր գոռում
 Ու հանդարտ քայլում.
 Նա խիտ բարկացած
 Եւ յոյսը դրած՝
 Երրորդ ջաղացին,
 Ուր ահա կ'ըկին
 Տեսաւ քօսակին՝
 Գլուխը քարշ գցած
 Եւ պատին հենւած,
 Լուռ ու մունչ տնկւած:

Էլ ջաղաց չ'կար, որ նա յետ դառնար
 Էլ հնար չունէր, որ նա կարենար

Նրանից փախչէր, երեսը չտեսնէր,
Հեռանար անձայն, նրա հետ չխօսէր:

«Գէ լաւ, քո հէրը էսա կ'անիծեմ,
«Գու չ'կարծես թէ շնորքից գուրկեմ...»
Այսպէս փրնթփրնթած, նա քիթի տակին,
Հաղիւ հաշտելով փիճակեամբ բախտին.
Եւ բեռ վերցնելում, կանչեց քօսակին
Որ թէ մուշտարուն օգնութեան հասնի.
Ու երբ էշից էլ բեռը վերցրին,
Երկունս էլ խէթ—խէթ, իրար նայեցին:

Քաշալը պարկը կողքին վայր դրեց,
Գլուխն օթօրելով չ'ւանն էր ծալում.
Քօսակն էլ պարկի մէկը խըտըտեց,
Տաղաց տանելով՝ յետ-յետ էր նայում:
Վերջապէս հաղիւ, չւանը ծալեց,
Իշին կանաչ տեղ երկար օրուկեց
Եւ կողքի պարկը շալակեց, մտաւ,
Տաղացի տաշտի կողքին վայր դրաւ:

Քօսակն էլ ահա, ադունը ամեց,
Տաղացն էլ կամաց-կամաց բան գցեց...
Մէկ տաշտին նայում- քաշալին գնում,
Մէկ ոտից պլուխ-քաշալին դիտում:

Քաշալն էլ պարկի կողքին նստելով
Կամ ցուպն էր կապում կամ դոտին շտկում.
Ջննում քօսակին ունքերի տակով
Ու քիթի տակին դարձեալ փրնթփրնթում:

IV

Տաղացը վաղուց բանի էր ընկել,
Երկու քաջերն էլ՝ դէմ առ դէմ նստել,
Կարծես թէ մի բան արդէն նրանց սրտում,
Կուսն էր տալիս, անհանդատացնում.
Թէ՛ «Ի՛նչ երկուսդ մէկ, մէկուց վախում,
Ինչո՞ւ չէք հաշտում ու քաղցր դրուցում...»
Բայց կարծես նրանք լաւ էին ըզրում
Եւ լաւ հասկանում իրար զօրութիւն,
Որ ոչ ոք նրանցից չէր էլ հանդգնում
Խանդարել միւսի—հանգստութիւնը:

Վերջը քօսակը չը համբերելով,
Դարձաւ քաշալին անվստահ ձայնով.

— Ամօթ չըլինի, իմ հարցրնելս,
Այ՛ իմ բարեկամ, դու ո՞ւմանցիցես»

— Տըրբնինանց թոռն եմ ես,
Գու իմ հօրը կը ճանաչես.
Գեօղչից մի վախտ տաւար բերաւ,
Թիփլիզ տարաւ, ծախեց եկաւ,

Ու մեր խալիսը «Չովդառն» աւել,
 Յանէս անւան կցան արեց,
 Եւ փոխանակ Յանէս ապեր
 «Չովդառ Յանէս» թաղա կնքեց
 Քաշայն այսպէս պատասխանեց:
 — Այդպէս ասա, ահ հէր օրհնած,
 Չովդառ Յանէսն էր քո հէրը,
 Բա կնոջը ես ինձնից խրանած,
 Բարեկամ ենք, և քո մէրը,
 Ասուած ըզօրմի նրա հոգուն,
 Ամեն աղիւղ թիքին ինձ հետ՝
 Միշտ կը կիսէր, կ'կանչէր տուն:
 Է՛հ, քսան տարի ես հօրդ հետ
 Կողքից աղ ենք բերել, ծախել...
 Ինչեր ասես, ինչեր թողնես...
 Էն օրերն ենք միասին քաշել,
 Որ չեմ յիշում, դուզս կարծես
 Քիչ է մնում գանդէս թռչէ...
 Մատաղ լինեմ նրանց հոգուն,
 Նրանց թաղւած գերեզմանին,
 Նրանց պէս շէն՝ օջաղ ու տուն
 Մեր կողմերից ողջ գնացին:
 Դու ջահիլ ես, ինչ ես գիտում
 Լաւն ու վատին կամ ճանաչում
 Քեզ հետ խօսող բարեկամին...
 Մէրդ, մեռնեմ նրա հոգին

Իմ հօր եղբոր մեծ աղջիկն էր:
 Մէկ ասում եմ, քեզ ծանօթ եմ—
 Մի քիչ գոյնդ շփօթում էր.
 Ասում էի մէկ հարցնեմ՝
 Թէ Յանէսի դու տղան ես,
 Մէկ մտածում—դուցէ նա չես...
 Քո աչքերն—իսկ մօրդ է,
 Յանդուցեալը կասես դու ես,
 Քիթդ, քիթդ այդքան նման,
 Ես իմ օրում էլ չեմ տեսած.
 Պայ, պայ Ասուած, էդքան նման...
 Օրհնի հալալ կաթիդ ծծած,
 Օրհնի, օրհնի աքօր տղաս,
 Օրհնի, օրհնի աքօր լալաս»...
 Եւ ձեռք տաւ աքօր աղին,
 Նոր կեղծ դառած բարեկամին:
 Քաշայլը վաղուց մօրից լսել էր,
 Որ շատ նման է նա իրան հօրը,
 Թէ որ ոչ աչքով և ոչ էլ տեսքով
 Երբէք նման չէ նա իրան մօրը՝
 Եւ թէ քօսակը ոչ թէ բարեկամ,
 Նոյն իսկ անծանօթ և զեռ չաքակամ...
 Նա շատ լաւ գիտէր, որ նա կեղծում է,
 Հօր մահն էլ արդէն քսանին մօտ էր
 Ու թէ քօսակը՝ երեսուն չ'կար.
 Նա քսան տարի սրտեղից կարար

Հօր հետ առեաւոր սկսած լինէր...
 Կա համազում էր, որ հա խաբուում էր.
 Վերջը, քաշալը նրանից պակաս չէր.
 Ինքն էլ սուտ, սուտ «մտիւ է» կասէր.
 Եւ մտածում էր, թէ ինչ հնարքով
 Քօսակին դադի, դադի շամփրով:

V

Երկար ու բարակ միասին խօսելով,
 Պարկերից մէկը՝ կերմակեց, պրծաւ.
 Եւ տաշտը թափուեց մեղմ փրփրալով,
 Ճերմակ ալիւրն էլ տաշտում կիռուեցաւ:
 Եւ երբ մոտցած ցորենն դարակեցին,
 Կիտում ալիւրն էլ պարկի մէջ լցրին.
 Քօսէն ծոծրակը քորելով դարձաւ,
 Իրան մենամարտ ընկերին տատ,
 Թէ՛ «Աքօր որդի ես դեռ ճաշել չեմ,
 Հացս էլ հատել, համ էլ սոված եմ.
 Դու էլ վազուցէ տանից եկել ես,
 Դիտեմ որ դու էլ արզէն քաղցել ես:
 Ե՛կ, արօր տղայ
 Ինձ քօմակ արայ,
 Թե՛մ կրակ անենք,
 Ու ջուր տաքացնենք,
 Կրկէնի թխենք,
 Իրար հետ ուտենք»

Անցեալը յիշենք.
 Բայց այսպէս անենք
 Ալիւրն ինձանից—
 Փուշին քեզանից:»

Քաշալն ինքն իրան «Քո հէրն անիծեմ
 Դու էիր պակաս, որ ինձ հետ մրցես,
 Ինձ ջախջախելու—ինքդ կ'ուսապուես...
 Քանի, քանիսի ծարաւ եմ տարել,
 Տարել եմ դեռ ու ծարաւ բերել...
 Քանի, քանիսի աչքերը կապել
 Եղած, չ'եղածը—ձեռքիցը խլել.
 Հիմա ուզում ես ալիւրս տոնես,
 Որտեղ էլ հստես ինձ ծանակ անես,
 Այս լոյս աշխարհում խալտառակ անես,
 Քաշալու թիւնս՝ բեղամաղ անես,
 Իմ կերած հացս, ափսոս համարե՛ս
 Դէ լաւ, սպասիր, հալթաթ քեզ կ'տեսնո՛ւ,
 Երբ տղութիւնս քեզ վրայ փորձեմ...»

Քօսակին դարձաւ,
 Տեսէք ի՜նչ տաւա,
 «Ա՛յ, ինչ եմ ասում,
 Ես ու իմ հողին.
 Լաւ ես մտածում,
 Ապրի քուր որդին.
 Բա ի՜նչ մեռածն եմ,
 Որ քեզ չը լսեմ.

Ի՞նչ մէծ բան է մի,
 Ուզածդ հրմի.
 Թող լինի այդպէս,
 Ձեռն խնայի քեզ ես.
 Փռչին ինձանից,
 Այլքն քեզանից.
 Բայց նախ ուտե՛լի՜
 Առակներ ասենք.
 Կամ թէ ուզում ես՝
 Մի, մի սուտ ասենք.
 Թէ դու կ'յաղթե՛ս՝
 Քեզ հարաւ լինի,
 Թէ կ'յաղթե՛ս ես՝
 Ինձ արժան լինի...»

Բա որ դու քո պստիկ տեղով,
 Չմերժեցիր իմ խնդիրը,
 Ապա ես իմ մեծ հասակով,
 Ո՛րեք կ'մերժեմ քո խնդիրը:

VI

Նրանք երկուսով երան գործի՝
 Կրակ արին ու թեժայրին,
 Եւ մի կտթոյս ջուր լքցրին.
 Դրին կրակին ու տաքայրին.
 Յետոյ թեքը քօսէն ծալեց,
 Մի բունն ալիւր տաշտը ածեց.


Դեռ ալիւրը չըշաղաղած,
 Փոքրիկ խմոր դեռ շրկալմած՝
 Ամբողջ տաշտը ջրով լցրեց,
 Բարձր ձայնով այսպէս կանչեց.

—Արօր որդի փուշիդ քեր դէս,
 Բեր մէկ տեսնեմ, ի՞նչ եմ անում.
 Յանկարծ, անմեղ ջուրը մէկ տես,
 Տաշտը թափուց, սուտ չեմ ասում:

2րնեղանաս արօր որդի,
 Էսպէս բաներ կը պատահի.
 Էս որ շրլի մինք չենք ապրի,
 Մինչ չը փորձենք՝ չենք աշխատի...»

«Բնա, բնա քեռի կը պատահի,
 «Այդպէս բանից չեմ նեղանայ.
 «Այս էլ կածեմ, թող մկայի
 «Դատարկ պարկս՝ ո՞վ է հաւատայ...»

Թափեց պարկը, տաշտը լցրեց,
 Բայց թէ՛ փայ էն հալին ածեց.
 Ըթթունքներն էլ բարկութիւնից
 Այնքան կծեց, արին հօսեց:



Քօսակը խմորը հունցեց, վերջացրեց.
Քաշալն էլ ջիզրից ուռեց ու փռեց:

Եւ երբ քօսակը,
Ուղեց կրակը,
Յիրուցան անի,
Կրկէնին թխի.,
Քաշալն չ'թողեց,
Քօսակին ասեց.—

—Եկ այս անգամ լսիր դու ինձ,
Ողջ խմորը միանգամից,
Մի Կրկէնի կրակին զցենք՝
Թխենք, յետոյ—նստենք, ուտենք:
Թէ չէ փոքրիկ, պատիկ, մատիկ,
Գցենք խմոր, զունդեր պիծիկ,
Նոր սպասենք՝ երբ են թխւում,
Թէ երբ եմ ես՝ նստում, ուտում.
Էնա մէկ մեծ հաց կըլինի,
Միանգամից կ'նստենք ճաշի,
Լաւ չի լինի.»

—Համաձայն եմ արօր սրդի,
Թող ասածդ լինի հմի՝.

Ի՞նչ եմ կորցնում,
Իմ ջաղացում,
Երբ որ ուզեմ՝
Քնի կ'պառկեմ.
Դու ես մենակ,
Որ պիտ գնաս՝
Հեռու քո տնակ
Է՛... Ե՛րբ կ'գնաս...»

—Էլ ո՞ր օրույ իմ քեռին ես,
Որ ինձ համար չ'պիտ մտածեղ.

Թէ ուշանամ —
Քեզ մօտ կ'մնամ,
Էս ջաղացում,
Լաւ չեմ ասում:»

—Արօր որդի բա դա խօսք էր,
Որ ասացիր.
Էղպէս խօսքը քեռուն կասեն
Չ'ամաչեցիր:

Քեզ ինձանից ով է ջոկել,
Կուգես —մայ,
Աղունդ աղել եմ վերջացրել,
Կուգես —գնայ:

Ուզածդ է մի կրկենի,
էդ չի եանի՝
Ո՞նց կըղիպ չեմ ազիդ խաթըրին՝
Այդպէս լինի:»

Ասաց քօսակը ու ցատկելով,
էլ չըսպասեց.
Խմորն առաւ սուր մասներով՝
Կրակին զցեց:

VIII

Չանցած մէկ ժամ, ողջ կրկենին՝
Թխւեց: Քօսէն բարեկամին՝
Ժպտաց, դարձաւ,
Այսպէս ասաւ.

—Արդեօք, այժմ լաւ չի լինի,
եթէ նստենք մենք սեղանի.
Եւ զրուցով, քաղցը խօսքով,
Մեզ յանգուրթ տանք էս կրկենով:»

—Վա՛... իմ քեռի, ճնց կըլինի,
Մի՛թէ դու քո խօսքդ կրկին
Ետ ես վերցնում—ճնց կլինի.
Չէ՛ որ միասին պայման գրինք՝
Մինչ ճաշելը ստեր ասենք,
Եւ յաղթուողը իր յաղթողին՝

Հալալ անի—փայ կրկենին...
Դու ծանօթ չես իզիթներին,
Նրանց կեանքի՝ արարքներին,
Նիստ ու կացին, մարդկութիւնին...
Որ թէ նրանք ինչ որ ասեն
Տէր են իրանց բեռնի խօսքին,
Թէկուզ խօսքին դռնի որդին...
Մեծ ամօթ է ու նախատինք
Ետ նահանջել աւած խօսքից—
Ասպետական՝ քաջութիւնից:»

—Վայ, վայ, է...հէ... արօր որդի,
Ում գլխին ես քարոզ կարգում,
Մի՛թէ խօսքս ես ստեցի
Եւ ասածս չեմ կատարում:
Քո արեւը—իմ արեւը,
Էսօր տւած մեր բարեւը...
Չէի յիշում ինչ ի ասել,
Քիչ նախատե՛ն, մարդ եմ սպանել.
Չես ճանաչում, այդ ինքս եմ,
Խօսքին հաստադ—միակ ես եմ.
Բայց տես, դու ես առաջարկել,
Այդ պայմանը մեր մէջ բերել,
Ուրեմն նախ ըսկսիր դժւ,
Յետոյ էլ ես, կըլսես—դու:»

—Դու ըսկսիր, մեծը դու ես,
Նախ դու ասիր՝ յետոյ էլ ես,

Մէկն էլ լսի
Ինձ ինչ կ'ասի...

Մեր քօսակը քիչ կանգ առաւ,
Գժւարացաւ «չեմ», «չում», արաւ,
Վերջն էլ յակիրճ առակը առաւ,
Բայց սրանով կռիւն ընկաւ...

—Մի տարի, թունդ երաշտ տարի
Պոնտոսի լի ափին բերրի,
Հայրս մի մեծ բօստան տնկեց
Ու բօստանում ձմերուկ սերմեց:
Անցան օրեր, քանի շաբաթ,
Ձմերուկների տունկն եկաւ
Եւ մեծացաւ այնքան նա շատ,
Որ մի ծայրը զնաց հասաւ,
Չինաստանի պարիսպներին.
Ձմերուկն էլ այնքան մեծ էր,
Որ թէ հօրով, եղբայրներով
Չէինք կարում մէկը շարժել.
Եւ ոչ նոյն իսկ ցատկել վրայով...
Այս էր սուտս, հաւանեցիր,
Աքօր որդի, ճիշտն ասիր:»

—Հայ, հայ, իբր սուտ ասեցիր,
ՌՎ չըզիտէ, որ կը լինի.
Պոնտոսը մի ահագին ծով,

Հողը բերրի, առատ ջրով.
Ձմերկի ծիւն ոչ թէ Չինաստան,
Նոյնիսկ կ'հասնի զեռ ճապոնեան.
Իսկ մեծութեամբ՝ կը գտնուին
Արածանու առատ ափին.
Քո աասժն էլ ոչ թէ սուտ էր
Այլ զուտ միայն խելութիւն էր:
Գէ լսիր, թէ այժմ ինչ եմ
Ես քեզ համար և նորութիւն,
Թէ կ'ապտմեմ ու շարացրեմ
Տաք, տաք, թաժայ՝ մի պատմութիւն,
Որ որցակի ձայն չի լսել
Ոչ էլ մարդու խելքը կտրել:

Մի տարի խիստ՝ քոչը—քոչ էր,
Ամեն երկրում՝ թունդ կռիւ էր.
Բոլոր մարդիկ փախան, զնացին,
Ամուր տեղեր՝ թաղնեցին:

Հայրս էլ մեր բոլոր կայքը,
Ինչ ունէինք ողջ մեր գոյքը,
Հաւաքեց ու հակեր կապեց,
Մէկ ահագին բեռը շինեց:
Մենք ունէինք մէկ աքաղաղ,
Մէկ մեծ, հսկայ—չըտեսնուած.
Հայրս մէկ օր առաւօտ վաղ,
Բեռնեց նրան հակերն կապած:

Քանի ամիս սանձը բռնած,
Դեռ ինքս էլ վրան բազմած,
Տխուր տրտում ճամպա ընկանք,
Մինչև մէկ մեծ դաշտի հասանք:

Հէնց որ հասանք, հայրս ասաց.
«Իջիր բեռից, փառք քեզ Աստուած,
«Աղատեցինք հալածանքից,
«Անյաղ սրի հարւածներից,
«Ոչ կարող են մեզ նոր գտնել,
«Եւ ոչ նոյն իսկ մեզ խանդարել...»
Պարզ է, հօրս ես լսեցի
Եւ բռնաբարձ մեր արլորից,
Հազիւ թէ ես մի ստոխնով,
Բեռից իջայ՝ վախ-վրխելով.
Եւ օգնելով ես իմ հօրը,
Քաջ արլորից վերջրինք բեռ...
Թաղիքներից՝ վրան տնկեցինք,
Եղած-չ'եղած ներս ժողեցինք:
Եւ երբ մէջքից բեռը չ'առանք,
Էս որցակը փալանն մէջքին,
Թաւալելով ընկաւ գետին՝
Հայրս ասաց «Խեղճ իմ քոհլան,
«Հմի կ'ասես քեզ մոռացան...
«Չբլինի թէ վնասել ես,
«Որ անհանգիստ թաւալում ես...»
Այս խօսքերը կրկնելով,

Տեղից ցատկեց վրայ վազելով,
Ակնաճալում փալանն վերցրեց:
Եւ ինչ զարմանք, մէջքին կար մեծ,
Մի ահագին վէրք ժահրոտում,
Որ արլարին՝ մաշում տանջում,
Չէր թողնում թէ մնայ կանգնած
Նոյն իսկ երբ նա կեր էր ուտում:
Հօրս վրայ շատ փառ ազդեց,
Եւ ամեն կերպ նա աշխատեց,
Որ արլորի վէրքը բուժի,
Նրա սիրտը մի կերպ շահի...
Դժբախտաբար ինչ էլ արեց,
Անտէր վէրքին՝ չ'սաղացրեց...
Գիշեր ցերեկ մենք էլ արթուն
Նրան բուժելու ջանք՝ գործ դնում,
Բայց ջանքերը թռան ապարդիւն:

Մէկ օր նստած,
Թեկն կռթնած,
Նոր նա յիշեց
Հօրից լսած՝
Թէ ընկոյզից
Իւր են հանում,
Վէրքի քաւում.
Նա է բուժում.
Մեծ հաքիւմ է,
Լաւ զարման է:

Հայրս ուստից չ'զիտեմ հարեց,
Մէկ մեծ աման յիշած իւզով,
Եւ ամբողջը վերքին քսեց.
Եւ ինչ դարմանք...քսած գեղով
էն աքլորի մէջքին մէկ ծառ,
Մէկ ընկոյզի, վիթխարի ծառ,
ձգներաշատ մէկ ծառ բառ,
Որի դադաթն երկինք հասաւ:

Եւ բառերի տակ եօթը հատ հօտ մեծ,
Ամեն մէկ հօտն էլ եօթհազար ոչխար,
Մի կողմում նստում, չ'հաշւած դեռ էծ,
Մուշ, մուշ որոճում մարիք բիւր հազար..
Եւ մի կողմն էլ ձիերի ջոկեր...
Արածում, թռչում անթիւ քուրակներ...
Եւ դեռ մի կողմն էլ
Գարտակ մնում էր:

Բա զիտեա, հայրս այն ազատ տեղը,
Մեծ բօստան շինեց, ձմերուկ սերմեց
էլ չեմ ասում դեռ էն անթիւ սեխը,
Որ հազիւ թէ նա, բաց տեղը ծածկեց.
Եւ զիտեա քեռի, այն ձմերուկները՝
Այնքան շատացան, այնքան մեծացան,
Որ տեղ չ'թողին-կալան դաշտերը
Ու թռում էր թէ լեռներ շարեցան:

Մէկ օր էլ հայրս, կացինը ձեռքին,

Կանգնեց և ուզեց կտրել ձմերուկին,
Բայց երկար տանջեց,
Մինչև անցք բացեց:
Մէկ էլ ինչ տեսնեմ, կացինը յանկարծ՝
Կոթիցը թռաւ--մնացինք ապշած,
Ընկաւ ձմերկի ներս՝ կտրւած տեղով,
Բացւած խոր անցքով:

Չատ չարչարեցինք,
Հնարք գործ գրինք,
Բայց մինչև օրս էլ
Կացինը դնում է:

Հայրս շատ փորձեց ուզեց այն անցքով
Ձմերուկի ներսը մտնի մի հնարքով,
Գուցէ կարենար, գոռտաք իր խելքին,
Կացինը գտնէր, ետ բերէր կրկին:

Բայց որովհետեւ մի քանի շաբաթ,
Ձմերուկի ներսում կ'թափարեր դեռ շատ,
Ուստի մի թոնիր փափուկ հաց թափայ
Ածեց մէկ խուրճին, որ ուտի, դնայ:

Հէնց այդ ժամանակ մէկ էլ էն ծակով,
Զ'զիտեմ ինչպէս գոռում, գոչումով
Եօթը հատ արար, իրանք ուղտապան,
Իրարից բռնած, ծակից գուրս եկան:

Հայրս երբ տեսաւ,
Նրանց՝ մօտեցաւ,
Ու ծանօթացաւ,
Տուն հրաւիրեց,
Յետոյ հարցրեց՝
Թէ արդեօք նրանցից
Տեսնող չի՝ եղել
Մեր կտրիչ կացնին,
Կամ ո՞վ է գտել,
Ետ բերել կրկին:

Բոլորը միասին
Հօրս ասացին,
Թէ ոչ տեսել են,
Ոչ էլ գտել են...-
Հայրս շատ տխրեց,
Որ չեն պատահել:
Դարձաւ. հարցրեց,
Կարո՞ղ է գտնել:

Նրանք էլ հօրս դարձան, ասացին.
«Տօ տեսաւք մարդ, խենթ ես թէ հիւանդ,
«Մօտ քսան օր է, ինչ մենք անընդհատ,
«Փնտրում ենք ներսում ուղտերի քարան,
«Որոնք մեր ձեռքից փախան ու կորան
«Մենք ամեն մէկս եօթհարիւրական
«Ունէինք ուղտեր, այն էլ սեփական,

«Բացց այժմս տես--եկանք ձեռնունայն.

Եւ գիտես թէ մենք
Ո՞րքան տանջւեցինք...
Ախպէր, որ կորան
Զօռ ան, որ չ'կան...

«Այժմ դու կուզես այդ անծայր ձորում,

«Կացինդ գտնես՝ մի՞թին աշխարհում.

«Հն, հն, օյին ես,

«Մաղալու մարդ ես...»

Ահա, թէ ի՞նչպէս տւին պատասխան,

Վերջն էլ հօրովս դեռ տնադ արին

Մեզ թողին մենակ, իրանք հեռացան,

Մեր կորած կացնի դարդը չ'քաշեցին:

Մ'սխրաս, ամիսներ, օրել էլ անցան

Եւ երբ աշխարհը նորից շունչ առաւ,

Ամեն կողմերում, երբ խաղաղեցան

Անյաղ սրերն էլ երբ հանգստացաւ,

Մենք վերադարձանք կրկին մեր տունը...

Քեռի, այստեղ էլ վերջացաւ սուտը:

IX

Նրան որ լսում էր քօռակն ապշած,

Զեռք--ձեռքի խփեց ու բարձր գոռաց.

—Քո տունը չ'քանդւի, պահ հրքետէն է,

Հատը չի լինիլ, սուտը էտ էր է...

Ախ, արօր որդի դա, դա մի սուտ էր,
Դա էնպէս սուտ էր էնպէս մի սուտ էր,
Որ սաղ աշխարհում դժուար թէ ճարտի
Կամ թէ գտնուի մէկը, որ հնարի:
Ես իմ հոգին, դու ինձ յաղթեցիր,
Լեզուս բնումը՝ տակից կտրեցիր
Ախպէր կրկէնին քեզ հալալ լինի,
Դեռ քեզ պարտական մնացի մի բխտի:»*

X

Քաշալը կարմիր կրկէնին քաշեց
Առաջը քաշեց, քօսակին ասեց
—Քեռ դեռի սա քո պարտքիդ մի մասը,
Բա երբ գամ քեզ մօտ, որ իմ բխտին տաս:»
—Դէ, արօր որդի խղճմամբ հունևո,
Քիչ ժամանակ տուր, եօթն օրից կ'տամ քեզ:»

Պարկի մէկն էլ,
Արդէն ադեւ,
Տաշան էր լցեւ:
Քաշալն ցատկեց,
Պարկը ժողեց
Ու կրկէնին
Ամբողջովին
Հետը վերցրեց՝
Բաժին չ'թողեց

*Բխտի = 1/4 կ.

Սուս — փուս ելաւ,
Ճանապա ընկաւ:

Ջաղացում մենակ քօսակը մնաց,
Որ բարկութիւնից, այսպէս փրնթփրնթաց:

Աղունն աղամ
Զրհադ չըտայ,
Խմոր հունցեմ,
Ինձ փայ չը տայ...
Բա կը թողնեմ
Ես զորանում...
Ախ...ում հետ եմ
Գլուխ դնում:

Բա դուք չ'տեսնաք,
Պարտք էլ չ'ինեց,
Լաւ ա մուրհակ
Նրան չ'ուզեց.
Ո՛վ է հըմի՝
Վստահանում.
Կամ թէ մէկի,
Քիչ հաւատում...
Դեռ սա փոքր էր,
Որ ինձ յաղթեց,
Որ մեծ լինէր
Ինձ ինչ կանէր...

Սրանում թողնեմ,
Ո'նց կլինի.
Բխտին վճարեմ,
Ե'տ խէր անի:
Ի'նչա, գիծ եմ—
Խըմոր հունցեմ,
Խըշուտ անեմ,
Ես կրակ անեմ,
Բուլեմ, թխեմ—
Նա վայելի,
Դեռ լի ու լի:
Ես ղրաղից
Մատս լիղեմ...
Տես քո քթից
Ո'նց կը հանեմ...
Մէկ տես նրան
Բոյ, բուսածին,
Քաշալ գլխին,
Դեռ պարտական
Ինձ էլ շինեց,
Որ թէ բխտին
Օխտը օրից
Պիտ դայ տանի.
Այ մաշտլայ,
Հարամ դողայ...
Ամաշում չի,
Սալին գիպչի...

Մէկը լսի
Ու ինձ տալի.
Ո'վ տսեց քեզ,
Որ քո ձեռքով
Թալակ սարեւ,
Ընկնես զօռով,
Խալխին թողես,
Ինքդ ընկնես...

Լաւ էն դտել,
Յարմարացրել.
«Թէ ինչ լեզուն
«Անի մարդուն»
«2ի կարենայ
«Էս գիւնիան
«Էն պատիւ-տայ,
«Ինչ ինքն-իրան...»

2լ, ես բխտին
2ըպիտի տամ,
Միայն երեսին
Կտսեմ—կըտամ:

Այսպէս վճուեց,
Քիչ հանգարուեց.
Պառկեց—
Քընեց.

XI.

Եօթն օրն էլ անցաւ.
Քաշալի դարաւ՝
Փամբ մօտեցաւ:

Քօսէն երբ տեսաւ քաշալին հեռից,
Կնկանը տեսէք ինչպէս դաս տաւ.
—Ա՛կնիկ քաշալը որ տեղակի ինձ,
Ասա քօ քեռին չըմնաց-մեռաւ.
Աստօծդ կ'սիրես ձեռք փերցրու մեղնից,
Հալրաթ դուրս կ'դամքո լաւութիւնից...»
Ինքն էլ անկողնսմ մեռած ձեացաւ.
Քաշալն էլ պարտքը ստանալու եկաւ:

Ը՛հ, մտաւ.
Կնկանն ասաւ.
«Բարի օր քոակին,
Ո՛ւր է իմ քեռին.
Եօթն օրն լրացաւ,
Բա քեզ բան չ'ասաւ...»

—Բնս, քուր որդի, քոակինն ասաւ.
Ջատ էլ որ ասեց. բանս վատ դառաւ...
Է՛ն երանի թէ նա դեռ ողջ լինէր
Քեզ էլ հաղարով, որդի պարտ լինէր:
Բա դու չես ասիլ, օրս սեացաւ,

Կարմիր արեւ շատ շուտ մթնեցաւ...
Ահա հէնց էս օր չորս օրը լրացաւ,
Ինչ որ քօ քեռին քօ շարը տարաւ:
Մեռելը տանը. դեռ թաղող չ'կայ,
Անտէր պճախումս, հո՛ւ, հո՛ւ փող չ'կայ...

—Է՛հ, քոակին ջան, դու դարդ մի անի,
Քաշալն արօրը տաւ պատասխան.
Էլ ես ո՞ր օրայ քուր տղէն եմ,
Որ էս նեղ օրին չ'դամ օգնութեան...
Աստօծ կամքն է, ինչ անենք քոակին,
Այդ էր ուղածը, թող այդպէս լինի...
Դէ վեր կաց, շուտ, կրակ վառի,
Սպասելու ժամ չէ, դէ շուտ շտապի.
Քիչ ջուր տաքացրու, մաքուր կաթսայով,
Լողացնենք. օձենք մարմինը խզով,
Տանեմ, կըթաղեմ իմ հալալ ձեռքով
Վերջացրեց խօսքը՝կեղծ արտասուելով:

Ջուրը տաքացաւ,
Քաշալը ելաւ,
Քօսակին խտտեց՝
Տաշտակում դրեց.

(Քաշալը գիտէր որ ողջ կեղծիք է.
Ինքն էլ ձեւանում՝ որպէս չըզիտէ:)
Եւ երբ տաշտակում դրաւ «մեռածին»,
Կրակի պէս ջուրը էն բլբլբլթալին,

Որ ամբողջովին չ'ածեց քոռակին՝
Քօսէն տաշտակից գոռաց ահռելի.

—Տօ տնաքանդ մարդ, յարութիւն առայ,
Իզքան տաք, տաք ջուր. կածեն մարդու վրայ,
Ա'կնիկ, շուտ, սառ ջուր, հմի որ մեռայ...
էս ինչ ոյին էր... ջուր, ջուր, սվ մեռայ...

—Քաշալը դարձաւ, քեռի քեզ մատաղ,
Դէ, չեմ իմացել թէ կըլինես սաղ...
Գա շատ լաւ եղաւ որ դու սաղացար,
Հէնց եմ իմանում, թէ նոր ծնեցար...
Հմի քռակին, մուրազիդ հասար.
Դէ մէկ ինձ անա, տեսնեմ իմ բիստին
Երբ պիտի տան, որ գնամ իմ բանին.
Գու էլ համ խօսքդ կատարած կ'լինես,
Համ էլ գիւնիում ազատւած կ'լինես,
Ու թէ քո հախէն թափ տւած կ'լինես...

—Օ՜Ք, արօր որդի, դու հոգիս կալար,
«Փառք քեզ Աստուած» աչքովդ տեսար,
Որ նոր սաղացայ որդիանց տամ քեզ...
Ինչ ես շտապում, կ'աշխատեմ կ'տամ,
Հմի դու գնա, եօթն օրէն քեզ ես.
Լիննի, չըլինի ամպատճառ կ'տամ:

—Ջատ լաւ կըլինի, քաշալն ասաւ,
Դուքս պրծաւ տնից ու մի բաշ փախաւ,
Էւ ինքն իրան քօսին ծաղրելով,
Յաճախ կըլինում էր կեղծ ժպտալով.

«Եկ արօր որդի
«Թխենք կըկէնի,
«Միասին ուտենք,
«Ուտենք քէֆ անենք,
«Ալիւրն ինձանից-
«Փուշին քեզանից...»

«Այ դու անամօթ մի քիչ էլ սպասի...»
Իմ տւած փուշին էժան չի'նտարի...»

XII.

Եօթ օրն էլ անցաւ,
Քաշալի՞ գալու
Փամը մօտեցաւ.
Քօսակը դարձաւ
Կընդանը ասաւ

«Սեւ լինէր օրը որ գրան տեսայ
«Անտէր թամահի, կծուն էլ էս ա.
«Հմի, ա կնիկ, հասաւ ոսկորին,
«Աստուած կործանի՝ այդ անիծւածին,
«Ինչ էլ որ անի, չեմ տարու բիստին.
«Թէկուզ ինձ մորթի, քեռի, սպանի,
«Խորովի, գաղի՝ ես ձէն չեմ հանի.
«Ամա առիւ չի, բանա սը թաղի,
«Տեղը իմացիր, սը գաս հանելու,
«Ես էլ դորանով՝ վրէժս եմ լուծելու,
«Այդ անպիտանին ջիզրից սպանելու...
«Պէ, գցիր անկողին, մէջն եմ մանկելու:»

Պառաւր իսկոյն անկողին զցեց,
Քօսակը մէջը՝ շորահան պառկեց:

Մէկ էլ ընր, քաշալը եկաւ

Առօր, փառօր ու ներս մտաւ.

—Քռակին, բարի օր, ո՛ւր է իմ քեռին
է՛ն, շատ շարժարեց էդ բիստի մասին...

—Ա՛խ... աքօր տղայ, աչքնա բացել
Գուհէնց բանն արիր քո դռատովիւնով,
Որ դո՛նէ կարար մի քիչ էլ ապրէր.
Զօռով սպանեցիր քո լողացնելով...
Քեզանից յետոյ, հազիւ անքալով,
Մի կերպ շո՛ւնչ քաշեց, անխ, վիշ անելով:
Ի՛նչ հնարք արինք... ինչէր շարեցինք՝
էլ զրբացի մօտ ասեա չ'զնացինք,
Գարբի զցողի զցել չըտւինք,
էլ ո՛ր խաշերի հողը չ'բերինք,
Եւ ջուր չ'արեցինք ու չըխմացրինք...
Թէ մէկը, միւսը, ոչ մէկը չ'օգնեց.
Իմ խեղճ ամուսնուս՝ ձեռքիցս խլեց.
Ինձ էլ անպաշտպան՝ դռները զցեց.
Միթէ հէնց էս էր վիճակել բախտից՝
Զրկւեմ իմ պարծանք թաղ ու պսակից
Եւ դատարկ նստեմ էս ծով աշխարհից...

—է՛ն քռակին ջան, քիչ յուսահատւեմ

էս աշխարհում, բոլորն են քեզ պէս.
Իզուր չէն ասել մեր պապերն այսպէս՝

«Թէ մէկը կ'իջնի—

«էն միւսը կ'ենի.

«Թէ մէկի մահը—

«է՛ միւսի՝ դահը:»

Զատ դարդ մի անի մի քիչ սպասի,
Ես էսա գնամ, կէս ժամից կըզամ
Եւ տանեմ կըթաղեմ, թէ չէ կ'հոտի
Եւ խղճիս առաջ ամօթու կ'մնամ...»

Քաշալը ասաւ,

Եւ դնաց—եկաւ՝

Մէկ սպիտակ փաթեթոյ միկռանտակին,
Թեւած մախաթն էլ, էնմէկել ձեռքին.

Գարձաւ—

Ասաւ.

—Գէ քռակին, ես էն շարթին
Իմ ձեռքովս լողացրել եմ,
Հարկաւոր է որ այժմս էլ
Ես իմ ձեռքովն պատանեմ...

Ու շտապ, շտապ քօսակին ասաւ,
Եւ կռան տակի կապոյն բացաւ
էն ձերմակ կտաւում «մեռածին» զրեց
Եւ կեռ մախաթով պատանը կարեց:

Այն էլ ո՛նց կարեց—

Ան-Աստուած վարեց.

Գրածս որ կարդար,
Գուցէ չհաւատար,
Բայց մեղաւոր չեմ.
Լսածս կ'առնեմ.
Դուք էլ կարդացէք,
Բայց չըսառսուէք.

Ամեն քաշիկիս, միտն էլ էր կարուս
Ու խեղճ քօսակի արիւնը քամում...
Տաք, տաք արիւնը ծըծուկ զուրս պցում.
Ահտէր պատանի արիւնով ներկում.
Բայց անպիտանն էլ կողքի էր ընկել,
Չէր էլ ուզում, որ թքածը լիզել...

Երբ որ պատանից
Գիշերն էլ հասաւ
Ու մի պինդ միժնից՝
Ըստակն առաւ
Իր պատանիւմին,
Ճանապարհն ուղղեց՝
Հանդիսատարանին...

Հասաւ. մէկ գաւթում քօսին պատանիւմ
Վայր դրեց—գհաց,
Հեռու թաղ կացաւ աչքերը չռած՝
Արդեօք մեռածը
Տեղից շարժում է, թէ էնա մեռաւ,
Սուտը դորդ գառաւ

Հէնց այդ ժամին
Այդ րօպէին,
Որդիանց որդէ
Մօտիկ քաղքէն,
Մի խումբ զոդեր
Գողացած իրեր,
Բերան այնտեղ,
Այդ գաւթի դէմ,
Որ իրար մէջ
Բաժին անեն՝
Աւարը մեծ,
Որ դրանց մէջ
Եւ կար մէկ մեծ,
Կեղտում կորած,
Ժանդը—կերած՝
Մի թուր,
Մի սուր:

Մէկը միջից,
Այդ զոդերից
Թուրը առաւ.
—Տեսէք մէկ ինձ,
Բարձր առաւ,
Էս անտէրը
Բանի պէտքն է,
Թէ անպէտքն է:
Ես կը փորձեմ

Էն գիակին,
Էն գիակին՝
Անթաղ մեռլին,
Թէ որ կտրեց
Ու չը ծուեց՝
Ես կ'վերցնեմ
Ու գին կանեմ՝
Էն թուրը,
Էս սուրը:

Էս որ չ'տանց,
Քօսէն վախեց,
Տեղից շարժեց,
Տեղը նստեց:

Այդ որ տեսան գողերը,
Թողին բերած աւարը,
Մէկ-մէկու կոխտելով,
Խիստ երկիւղից շփոթւելով,
Իրանք վախան չուրը,
Կարծելով թէ մեռելը՝
Վեր է կացել—վախացնի,
Ով ճանկն ընկնի—մեռցնի...

Քօսէն օգտւելով այդ հանգամանքից,
Գողի խմբակի վախկոտութիւնից,
Թողած աւարին ստեց մօտենայ,

Ջալալի փախչի, ոչինչ չը մնայ...

Քաշալն այն կողմից, որ լաւ դիտում էր,
Քօսակին զոռաց «տեղէդ չ'ժարչես,
Բա ես քեզ համար խոր հորեմ փորել:
Որ տանեմ թաղեմ, դու վէր ես կացել...»

Քօսակն աղի արցունքն տչրերին,
Գարձաւ քաշալին այսպէս խնդրազին.
—Այժմս զգում եմ յանցանքն իմս էր,
Լաւ ազատւեցի, թէ չէ, մահս էր.
Ոչինչ...լաւ եղաւ...եկ հմի մեր մէջ.
Հալալ փայ անենք էս աւարը մեծ.
Եւ մնայ յիշատակ, որ մենք էլ անվերջ՝
Լինենք միշտ սիրով ու այն էլ անշէջ...»

Լաւ, քո ասածը լինի, իմ քեռի,
Ինձ ճանաչեցիր դոնէ դու հրմի...
Գէ նստենք փայի, դոնէ այս անգամ,
Գու ինձ կեռ չ'տաս, թէ չէ...ես դիտամ:»

Աւարն էլ առան,
Գաւթի մէջ մտան:

XIII

Փայ արին պրծան, քօսակը էլի
Չբուեց բիստին՝ մերժեց քաշալին:

Գիշերըն էլ մութն էր,
Մութն էլ շատ թունդ էր:

Քօսակը վերցրեց փայլը որ փախչի,
Բայց չէր կարում թէ վանդակից թուշի:
Քօսէն առաջին, վանդակի միջին,
Վազում էր՝ փախչի, դուռը չէր գտնում,
Քաշան էլ հոքից «Բա իմ մի բխտին»
Ամեն քայլելիս, հենց էս էր կրկնում
«Բա իմ մի բխտին,
Բա իմ մի բխտին:»

Գողերն իրանցից, հենց այդ ըսպէին,
Ստուգելու համար, զրկեցին մէկին-
Թէ իրաւ մեռելք, գերեզմաններից
Վեր էին կացել թէ հենց շաքից
Իրանք են խրտնել, իրանց երկիւղից:

Եւ այդ ստուգողը, գողի խմբակից,
Անտեղ վրայ հասաւ, երբ քաշայն ընկած՝
«Բա իմ բխտին» քօսի ետեից,
Զարունակ գոռում սաստիկ կատաղած:
Եւ երբ որ զլուխը վանդակի ճեղքով,
Ներս տարաւ տեանի, իզիթը սրտով,
Քօսակի աչքին՝ խսկոյն զառնեց.

Քօսէն էլ մէկնեց ձեռքը՝ նրա գլխից,
Փափախը վերցրեց, քաշային տեց.
Ու բարձր ձայնով, վրան բղաւց.
«Ըհր, առ, էս էլ թող բխտին լինի...
«Եանի սրանով ետխէս թափ տւի...»

Քաջ սուրհանդակը՝ աւազակների,
Որ ներկայ եղաւ այդ տեսարանին,
Ահ ու սարսափով զէպ ընկերներին,
Գլխաբաց փախաւ, որ լուրը՝ յայտնի-
Եւ տեսէք ինչպէս,
Տեսածը պատմեց.

«Ձեզ մատաղ, փախէք,
«Թէ չէ կորած էք,
«Ողջ մեռելները,
«Վեր էին կացել,
«Ատրը տարել,
«Գաւթի մէջ մտել
«Իրար մէջ բաժնել.
«Եւ զիտէք ինչ էր
«Ամենին հասել՝
«Միայն մի բխտի:

Նընացից մէկին, այդ էլ չէր հասել,
«Բաժանարարի ետքիցն ընկնելով,
«Սաստիկ կատաղած ուժեղ գոռում էր
«Բխտին պահանջում նրան սպառնալով:

«Նա էլ իմ գլխից, գլխարկս փերցրեց
 «Ու մէկ բիստու տեղ մէկէլին տւեց.
 «Ինչպէս երեւաց զա ուշացել էր,
 «Որ իրա փայլից քիչ մնաց զրկւէր.
 «Ես վախենում եմ ուշանող լինի,
 «Այստեղ զան մեղ էլ թալանեն-չ'լինի...»

«Վա՛ն...» բոլորն սառան
 Ու մի՛ բաշ փախան:
 Այսպէս ահ սառան,
 Թող տւին—փախան:

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն.

Այժմ կարդացի՞ր—
 —Ջատ լաւ էլ արիք.
 Բայց խնդրեմ ասէք,
 Ի՞նչ օգուտ փերցրիք,
 Որքան շահեցիք...
 Ջահը՝ ես կասեմ՝
 Իսկ զուք լսեցէք,
 Թէ որ ճիշտ չ'ասեմ՝
 Դուք ինձ ուղղեցէք:—
 Այս առակը ան է ասում,
 Ինչ ամեն օր մենք ենք տեսնում...

Քաշալ, քօսակ ամեն քայլում
 Հանդիպում են, միայն չէք տեսնում,
 Նրանց լեզուից մեղրն է ծորում,
 Իսկ թէ սրտում՝ ի՞մն է նիրհում
 Եւ անընդհատ թոյն արտադրում,
 Մթնոլորդը ապականում:
 Ուրեմն մենք պէտքէ զիտենք,
 «Նմաններից» մի բաշ փախչենք...

Երկրորդ—2' լինենք կոպիտ ու յամառ,
 Յամառութիւնից չունենք ոչ մի շահ,
 Այլ պարտաճանաչ, ազնիւ անկեղծ մարդ,
 Որ զուցէ մնայ քիչ բան շտկելու,
 Թերութիւններն էլ՝ շուտ ուղղելու:

Երրորդ-Քանի կան բաղտախնդիրներ,
 Տիպերիս նման կեղծ բարեկամներ...
 Աչքները դարձրած ուրիշի ձեռքին
 Եւ թուխսը նստած, իր ունեցւածքին...

Դրանք այս կեանքի վատ օրինակն են,
 Որոց չ'պէտքէ, հրէք նմանւենք,
 Եւ թէ ամեն օր պէտք է աշխատենք,
 Մեր վատ սաղմերը կրճրենքէս հաններ,
 Ու նրանց փոխարէն լաւ սերմեր ցանենք,
 Որ մենք «մարդ» կոչման արժանի լինենք:

Չորրորդ — 2'կայ չարիք—առանց բարիքի.

2'կայ բարիք—առանց չարիքի:

—Վերջը.

—Վերջն էլ...

1912 փետրւար.

Գանձակ:



ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես	տող	տպւած է	պիտի լինի.
3	3 վ.	ըս	ըստ
..	9 ն.	հիշում	յիշում
10	5 վ.	փրնթփրնթած	փրնթփրնթաց
15	7 ն.	ինչ	ինչ
26	12 ն.	քուրակներ	քուռակներ
27	7 ն.	կ'թափարեր	կ'թափառեր
28	4 ն.	փնտրում	փնտռում
29	10 ն.	օրել	օրեր
30	13 ն.	Քեռ գեռի	Քեռի, դեռ
32	9 վ.	Բուլիմ	Պուլիմ
36	6 վ.	ոյին	օյին



Նոյն հեղինակի աշխատութիւններից լոյս են տեսել՝

- 1) «Մօր Հառաչանքը» (Պօէմա) — 10 էջ.

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Զուտով լոյս կ'տեսնեն նոյն հեղինակի.

- 1) Բանաստեղծութիւններ I սերիա.
2) " " II "

Վաճառում է Կովկասի գրախանութներում:

Պահաւոր՝ հեղինակի մօտ. հասցէն —

ЕЛИСАВЕТПОЛЬ. Учителю Араму Вердіянцу.